



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՍԻԼՔԸ



ատիկը հայկական ժողովրդական տոներից մեկն է իր լայն առումով և խորհրդով: Քրիստոսի հրաշափան հարուրյան տոնը, որ քրիստոնյա աշխարհի մեծագույն տոնն է, որպես հոգելոր ցնծուրյան և ուրախուրյան հանդիսականարուրյան, մեր լեզվի մեջ կոչվում է նաև ԶՈՏԻԿ:

Զատիկը հավանարար Հայաստանում հայաքրիստոնեական մի տոն էր, «Հայոց հերակոնուրյան ծամանակեն մեացած, եղանակներու համանակ կամ զիշերահավասարի տոնը, որ քրիստոնեուրյան մեջ Պատեհի քրիստոնեացած հետական տոնին հետ փոխանակված է, ինչպես եղած է Վարդապատ և Մաղկագար անուններուն և տոներուն համար ալ» (Օրմանյան, «Համապատում», էջ 706):

Զատիկը ուրեմն զարեան նվիրված տոն էր, երբ անցնում էր մահացունշ ձմեռը և փոռմ զարեան իենդանարար շունչը, հարուրյուն տպով մեռած բնուրյան, և երբ զարեան շերմշիչ տակ ծրում, կանաչում էր ծառ ու ծաղիկ, կենդանաւում առ ու համեր, կանաչով ու երփներանք ծաղիկներով, հայ ժողովուրյուն ուղունում էր զարեան զարութը՝ հանդիսուրյուններով և Զատիկի տոնով:

Գարեան վերապարոնիկն նվիրված խորհրդապաշտական տոներ ունեցել են նաև ուրիշ հերանոս ժողովուրդներ, բայց Զատիկը, որպես զարեան տոն, առանձին շունչով ու շերմուրյամբ տոնել է միայն հայ ժողովուրյունը:

Քրիստոսի Հարուրյան տոնն էլ, այսինքն հայկական նոր Զատիկը, նիկիայի տիեզերական առաջին ժողովի որոշումով (325 թ.).

առնվուն է միայն զարեան զիշերահավասարի լուսնի լրման հաջորդող առաջին կիրակի օրը: Այսպիսով, Զատիկա քրիստոնեական տոնի իմացքի մեջ պահպանվել է մասամբ նաև զարեան տոնի հին իմաստը:

Հին ժամանակներում սովորուրյան է եղել Զատիկի տոնին պատրաստել նաև ԶԱՏԿԱԿԱՆ, ԶՈՒ և ԶԱՏԿԱԿԱՆ ԳԱՌ, որպես ձմեռային մենելուրյունից վերապարելով և հարուրյուն առնոր բնուրյան խորհրդանշան, որպես զարեան տոն, կյանքի և ուրախուրյան տոն:

Հին ժողովուրդներից հրեաները ևս ունեցել են և ունեն ԶՈՏԻԿ ՏՈՆՆ: Հրեական Զատիկը տոնվում է ի հիշատակ հրեաների եզիզութեան գերուրյունից ազատուրյան և Կարմիր ծովից դեպի Ավետյաց երկիրը անցման, և այդ իմաստով այն երայեցերեն լեզվում կոչվում է «ՊԱՍԵՔ», որ բարգմանի անցք կամ ելք, որպես և ի մեջ ասուզաբնի զատումն, բազի յայս ասուր ելին և զատեցան որդիկն Խարայէլի յեզիզաւոսէ» («Եոր Բաղդիրք Հայկացան լեզուի»):

Հրեաները իրենց Պատեհի տոնին մորում էին զատկական գառ, ինչպես Մովսես հրամայէլ էր երանց՝ «առէք ձեզ ոչխար ըստ ազդ ձեր և զենջիք, զի Զատիկ Տեառն է» (Ելք ԺԲ 11, 21):

Նոր Կատարանի մեջ գործածված է նաև ՈՒՏԵ, ԶԶԱՏԻԿ բացատրուրյունը (Մատք. ԽԶ. 17): Հիսուս ևս ցանկուրյուն հայտնեց իր երկրագլու կյանքի վերջին օրերին «ուտիւ զԶատիկն աշակերտօն հանդերձ» (Մատք. ԺԴ 14):

Քրիստոնեական Զատիկը տոնվում է ի հիշատակ Քրիստոսի հարուրյան և ոչ մեկ

հմանություն չունի հրեական Պատեմի նեա. ըստ իմաստի և խորհրդի:

«Թատիկ մեր զենա Քրիստոս» (Ա. Կորնք. Ե 7): «Յս իսկ զենդանաւար մարդին սրբոց առաքելոցն ի կերպուր և կատարեաց զիտրություն որ յաղագու այնց» (Նիրակացի):

Հրեական Զատիկը տավերն է Քրիստոնեական կուն Զատիկի՝ Գողգորայի վրա մեծագույն գրի:

Անանիա Նիրակացին (է դար) իր «Ի Զատիկն Տեանի գրվածքում գրում է՝ «Հայատանեացու առաւել նշմարտապակ անուանի Զատիկ Տեանն, այսինքն զատուցեալ յամենայն հերանոսականաց և հրեական տօնից, սրբալ և լեալ տօնիցն Տեանն տօն և ժողովոց ժողով», որպեսզի Եղբակացեալ է զիտնական վարդապահոր, «Փ յարութեան Միաձնին ուրախ լիցուր, հաղորդալ մարմելոց և արեան նշմարտին Գոտինն, որ է հայ Երկինուր»:

Քրիստոսը եղավ ճշմարտապահ «Գոտն Առուածոյ, որ բանեալ զմելու աշխարհի»: Խա Երատափածային կյանքը տվեց աշխարհի փրկության համար: Այդ փրկարաւ խորհրդի մեջ բնորդրվեց նաև հայ ժողովուրդը: Քրիստոսի մարդկության համար բափած արյան մեջ զավ նաև հայ ժողովուրդը իր փրկությունը: «Զատիկն, — գրուն է Գրիգոր Տարեացին, — ԱՌԱՍՈՒԹԻՒՆ բարգմանի»:

Ուրեմն, ԳՈԱՏԿԻ հայության համար նաև ԱՌԱՍՈՒԹԻՒՆ ՏՈՒ է, ՓՐԱՌԻԹՅՈՒՆ ՏՈՒ է, ՀԱՎԱԾԻ ՏՈՒ է, մահվան վրա կյանքի ՀԱԴԹՈՒԱԿԻ ՏՈՒ է, ՆԵՐ ԿՅԱՆՔԻ, ԴԱՐՆԱՆ ՏՈՒ է:

Անա այն մեծ ԱՎԵՏԻՔԸ, որ հնչել է միշտ հայ ժողովրդի ականչին, Քրիստոսի հարության լուսապայծած բոլոր առավտաներին, անա այն մեծ ՏԵԽՈՒՔԸ, որ միշտ Երևացել է Քրիստոսի բափուր զերեզմանի առաջ ծերապիր և աղորավոր հայ ժողովրդին, անա այն ՄԵԾ ԴԱՅՈՒ, որ նա բաղել է Քրիստոսի հարության դեսպից:

Զարշարված, խաչված, յորնապատիկ խոցված իր սրուզ հայ ժողովուրդը Երեխ չի կորցրել իր հույսը, իր անկուրում հավաքը իր հարության, իր վերեւեցից, իր զերեզմանից նա միշտ վերակենդանացել է Քրիստոսի հարության ավետինվ, նոր կյանքի, մեծ զալիքի, նոր զարնան հույսով և երգով:

«Ու է, մա՞ս, յաղորիխն նո, ո՞ւ է, դժո՞խ, խայրոց նո»:

Քրիստոնեական կյանքի, բարյականի և ստովածարանուրյան հիմնաբանն է Քրիստոսի հարությունը: Քրիստոսի մաքր Գողգորայի վրա և նրա հրաշական հարությունը զերեզմանից առաջալների հարողության ալֆան և օմեգան են հանդիսացել: Հերանոսաց մեծ առաքյալ Պաղոսը շատ սուր և նիշտ կերպով

է դնում հարցը բոլոր ժամանակների, բոլոր սերունդների առաջ. «Եթէ ՔՐԻՍՏՈՍՈՍ ՉԻՑ է ՅԱՐԱՒՅԵԱԱ, ԸՆԴՈՒՆԱՅՆ է ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆՆ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ԵՐ ՀԱԻՍ.ՏՔԸ ՉԻՑ»:

Քրիստոնեական զաղափարների և բարյականի լույսի տակ, Քրիստոսի լուսապայծած հարությունը մարդկության փրկության հայտարարությունն է:

Քրիստոսի հրաշական հարության ամենաշերժ հավատացյալներից մեկն է եղել նաև մեր ժողովուրդը, իր կյանքի փորձով: Խոր չէ, որ նրան անվանել են ՔՐԻՍՏՈՍՈՆԵՆԹՈՒՅՑԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԸ, եվ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՍՈՒԿԻ: Խա մեր ժողովուրդը, անինայուեն շաշշարի է, խաչվել է իր համոզմուեների համար, առաջադիմուրյան համար, իր հայրենի սրբությունների պահպանման համար: Միշտ սուր են բարձրացրել մեր Երկիր ազատության և անկախության վրա, վիշապուել են մեր ժողովրդի պայտապահ ազգային արժանապատվուրյունը, արհամարհի են մեր լեզուն ու մեր կրոնը, ավերել ու ամայացրել են մեր ձաղկուն հաղափներն ու պահեները, ոչնչացրել են նրան նորաքանակ ու նովուոր ծախուրիքի հուշարձանները, բայց Երեխ երա հոգում չեն կարոցացել մարեւ հարության տեսիլքը, երա անմոն հավատը վերշնական հաղորդակի նկատմամբ: Հայուրյունն հանախ աեցել է տրամուրյան ու հուսանատուրյան Գերսեմանիի պատեզից, իր խաչը ուսած բարձրացել է իր արյունու Գողգորան, և իր խաչի բարձուներից տեսել և ողջունել է իր հարության, իր Զատիկի լուսապայծած և խոսուունալից այգաբացը:

Ա. Հարության մեր նոգերով շարականները, Երեխը, մեղեղիները հագեցված են այդպիսի սրանուու հավատով, ազատուրյան շնչով և փրկության զաղափարով: Հարության նվիրված շատ շարականների մեջ կա ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՈՒՔԸ, մահվան դիմաց ԿՅԱՆՔԻ ՀԱԴԹԱՆԱԿԻ ԵՐԳԸ, մահը, շարիքը, մեղքը, դժվարությունը հաղորդականելու վեռականությունը: ՄԱՀԸՈՎ ՀԱԴԹԵԼ ՄԱՀՎՈՆ, ՄԵԹՈՆԵԼՈՎ, ԱՓՐԵԼ: Սա նշմարտազանցուրյուն չի Երեխ մեր ժողովրդի համար, այլ՝ աշխարհայց, կենսափորձ՝ ծերի բերված դաստ ճիգերի և կորուսների զնով: Հայ ժողովուրդը, զուտեալդրված Քրիստոնեական լույսով, ձգուել է միշտ «առավիլ կյանքի», համերժական կյանքի, ապրելու և ստեղծագործուու հայինույան: ՆՈ. ՆՎԱԶԵԼ է ԺՈՂՈՎՐԴԻ ԿԲԱԿԱՆ ԵՄ ՀԱՎԱԾՈՎ, եվ ԱՓՐԵԼՈՒ ԿԱՄՔԻՆ, և արժանի է նա ապրելու և միշտ փառափուելու կյանքի զորությունը, հարության, մշտնչենափոր, անման կյանքի զաղափարը և տեսիլքը:

Այս իսկ պատճառով, Քրիստոսի հարության նվիրված մեր շարականներից նիշում է

միշտ ԿՅԱՆՔԻ ՑԵՍՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ, ԱՆՄԵՌԻ
ԿՅԱՆՔԻ ՊԱՏԳԱՄԸ:

«ՔՐԻՍՏՈՆ ՅԱՐԵԱԼԻ Ի ՄԵԽԵԼՈՅ, ՄԱ-
ՀՈՒԱՄՔ ԶՄԱՆ ԿՈԽԵԱՅ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄԲՐՆ
ԻԽՈՎԿ ՄԵԶ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԳԵՒԵԱՅ»:

Զատիկը հայ ժողովրդին բերել է միշտ հայ-
րական կյանքի ցնծուրյուններն ու բարիքելե-
րը: Անա թե ինչու մեր եկեղեցիներում տար-
վա բոլոր կիրակիները նվիրվել են Քրիստոսի
հարուրյան հիշատակի փառավորման, որ-
պեսզի հայ հոգիներում առատանան, աղքե-
րանան հարուրյան բարիքները: Կիրակի օրեւ-
րը կարդացվում են «Խոլաբերից», կոչված
Ավետարանները, հավատացյալների հոգում
միշտ վառ պահելու համար Քրիստոսի հրա-
շափառ հարուրյունն ու երա իրական հշա-
նակուրյունը: Բացի այդ, Զատիկից մինչև
Հոգեգալուստ երկարող 50 օրերը, որոնք կոչ-
վում են «Յինունք», առավելապես նվիր-
ված են հարուրյան դիպին և խորհրդին, երբ
սաղմոսներով, ավետարանների ընթերցում-
ներով, հարուրյան նվիրված գեղեցիկ շա-
րականների երգեցողուրյամբ, եկեղեցին
հնչեցնում է երկրի վրա Աստուծու բազավո-
րուրյան հաստատուրյան ավետիքը:

Մեր ժողովուրդը տեսիլ ունեցող ժողո-
վուրդ է, հոգիի ժողովուրդ է: Զի մահանա
երեք այն ժողովուրդը, որը տեսիլքներ ու-
նի: Մեր ժողովուրդը ունեցել է փառավոր և
սոույզ տեսիլքներ: Եվ նրանց մեջ ամենա-
փառավորը՝ իր վերազարդումի և փրկուրյան,
ազատուրյան տեսիլքը:

Երեկ մեր երկրը եզեկիելյան տեսիլի
հման «մի դաշտ էր լի ոսկերօք մարդկան»:
Բայց անա խորից Քրիստոս հարուրյուն ա-
ռավ մեր սիրելի ժողովրդի և Հայրենիքի

համար: Մի երշանիկ օր, մի սուրբ առավոտ,
հայ ոսկորեների վրա հարուրյան կենդանա-
րար շունչը փչեց: ՄԱՀԱՆ ԴԱՇՏԸ ՎԵՐԱՄ-
ՎԵՑ ԿՅԱՆՔԻ ՊԱՐՏՅԵԶԻ: Ոսկորեներն իրաւ
եկան, միս ու արյուն հազան, կենդանացան,
որովհետև Աստուծու շունչն եմուտ ի նոսա,
և եղեն կենդանի և կանգնեցան կացին ի
վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում,
յո՞յծ, յո՞յծ»:

Դա մեր ժողովրդի ԶԱՏԻԿՆ էր, ՀԱՐՈՒ-
ԹՅՈՒՆԻ:

Հայ արյունով ներկված դաշտ ու
հովիտ, լեռ ու ձոր միաբերան աղաղակում
են Ս. Հարուրյան այս տոնի առավոտյան՝
«Զիւ ԽԵԴՐԻՔ ԶԿԵՆԴԱՆԱՆԻՆ ԸՆԴ ՄԵՌԵԱԱՍ, Զ և ԱՍ, ԱՅ ՅԱՐԵԱԱԻ»:

Այս, հարյավ հայ ժողովուրդը իր Հայրե-
նի հողի վրա, իր Փրկչի պես, և դեպի ահ-
մանուրյուն է բայլում նա իր Փրկչի հման,
հարուրյան երգը շրբներին.

«ՓԱՌՈՔ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈ,
Տ էր...»

Այսօր, երբ հայ ժողովուրդը ցնծուրյամբ
տոնում է ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՏԻԿԸ, նա
միաժամանակ տոնախմբում է նաև իր
ՀԱՐՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏԻԿԸ: Եվ ամեն ան-
գամ, երբ մեր եկեղեցիների սուրբ կամար-
ների սակ կենչի Քրիստոսի հրաշափառ հա-
րուրյան հաղթական օրիներգը, մենք կյանք
նաև հայ ժողովրդի ՍՏՈՒՅԴ, ՃՇՄԱՐԻԾ,
ՓԱՌԱՎԱՐ եվ լՈՒՍԱՓԱՅԼ ՀԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՂԹԱԿԱՆ ԵՐԳԸ:

Արդարեւ հարյավ Ազգն Հայոց:

«ՓԱՌՈՔ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈ»,
ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ:

